

Ա. ԵՐԵՄՅԱՆ

ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՐԱՆԿԱՐՁԻ ԱՐՎԵՍՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

(13-րդ դար)


ասներեքերորդ դարի մանրանկարչական արվեստի լավագույն և պայծառ զեմքերից մեկն է Իգնատիոսը, որն իրքի հմուտ մանրանկարիչ, գրիչ և զեղագիր հայ մշակույթին ավանդ է թողել բանկագին ձեռագրեր, որոնք հայ գրչադրույան և նկարչության պատմության մեջ պատվավոր տեղ են դրավում և իրենց հիմնական գծերով պարզ գաղափար տալիս արվեստագետի գեղարվեստական ստեղծագործական կերպարի մասին:

Արդարե, եթե 13-րդ դարի հայ ժողովրդի պարծանքը և Հռոմեացի զպրոցի փառքն է կազմում բազմաշխատ, տաղանդավոր մանրանկարիչ Թորոս Ռուպինը, ապա Հռոմոսի, Հավուց Թափի, Տեկորի վանքերի հպարտությունն է վաստակավոր արվեստագետ Իգնատիոսը, եթե 14-րդ դարում իր գեղարվեստական ստեղծագործություններով Սյունիքի Գլածորի վանքում հաշակվում է արևելահայ զեղարվեստական անվանի մանրանկարիչ Թորոս Տարոնեցին, ապա նույն 14-րդ դարի առաջին կիսում իր բարձր արվեստով և բոլորովին ինքնուրուցն վրձինով Կիլիկիայում փալլում է Սարգիս Պիծակը, որի արվեստի որույն կառուցվածքը և ոճային հատկանիշները վկայում են նրա նկարչական և գրչադրական հարուստ ձիրքերի և նվաճումների մասին:

Սակայն անժխտելի է, որ այդ տաղանդավոր մանրանկարիչների կյանքի հիմնական գծերի և արվեստի էության մասին մինչեւ օրս դեռ առանձին մենագրություններ չեն հրատարակվել: Այսօր, սակայն, ժամանակն է, որ այդ կարևոր աշխատանքը մասամբ կատարվի:

Անհրաժեշտ ենք համարում այստեղ գծել այդ անվանի մանրանկարիչներից մեկի, Իգնատիոսի պատկերը, որի կյանքի պատմության էջերը մեզ տանում են 13-րդ դարի առաջին շրջանը: Նա մի նկարիչ է եղել, որն իր հմուտ վրձինով առանձին տաղանդ և ինքնուրությունն է ցուցաբերել ոչ միայն զարդագրության, մանրանկարչության մեջ, այլև հոչակ է վայելել որպես վարպետ գրիչ ու գեղագիր: Այդ հանգամանքը հաստատում են մանրանկարչից մինչև օրս հայտնագործված և գեղարվեստական ուրույն արժեք ներկայացնող այն ձեռագրերը, որոնք նա կերտել է գյուղակորապես Հռոմոսի, Հավուց Թափի (Հավուցթափի և Խծկոնի ուխտի—Եփրակում, Բեշ-քիլիսա), Տեկորի նշանավոր վանքերում, ինչպես այդ տեսնում ենք Նոր-Ջուղայի (Սպահանի արվարձանը) Ամենափրկիչ վանքի մատենադարանում՝ գտնվող № 36 Ավետարանի հիշատակարանում: Ոյ յարդար վասուակոց իմաց և աւանդեցի: զսակ հրեշտակարնակ ուխտին Խծկամս, որ Տեկորոյ վանք կոչվի:



Վաստակավոր նկարիչ, գրիչ և գեղագիր իդնատիոսի մանրանկարչական արվեստի էլուժյան մասին գաղափար տալու համար զենքը 10—13-րդ դարերի հայ գրքի նկարագրման և առհասարակ հայկական գրականության ու գեղարվեստի պատմության սեղմ էշերը:

Պատմական փաստ է, որ նույն դարերի հայ մշակույթի մեջ բանաստեղծական, նկարչական, ճարտարապետական ու բանգակագործական արվեստներու ուշագրավ դեր են կատարում: Այդ տեսակներից բնորոշ է նաև հայ գրչության արվեստը, որը 10—13-րդ դարերում նշանակալից նվաճումներ է ունեցել Հանգսես են գալիս գրական փայլուն և հարուստ ձիրքերով օժտված լուսապսակ, պայծառ գեմքեր, որոնք իրենց հոյակապ ստեղծագործություններով նորություններ են բերել հայ գրականությանը և հարստացրել հայ մշակույթի գանձանը:

Արդ, համառոտակի ցույց տանք, թե մինչև Իդնատիոսի երեան դալ ի՞նչ պատկեր էր ներկայացնում հայ նկարչությունը, մանավանդ մանրանկարչությունը, որոնց նմուշները զարդարում են ձեռագիր գրքերի էշերն ու լուսանցքները: Ճիշտ է, 6-րդ դարի հայ մատենագիր Վրթանես Քերթողը խոսում է իր ժամանակի մանրանկարչության մասին, բայց փաստն այն է, որ միայն 10—11-րդ դարի ձեռագրերում ենք տեսնում ուշագրության արժանի արվեստ: Այդ տեսակներից ուրույն արժեք ունի Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում (Զենադրատանը) գտնվող փղոսկրյա նույր կազմով ձեռագիր Ավելասարանը: Դա արվեստի մի գեղեցիկ հուշարձան է, որի նկարներն ու մանրանկարները իրենց նրբությամբ ցույց են տալիս 10-րդ դարի նկարչական արվեստի զարգացման բարձր աստիճանը Հայաստանում: Նշենք և այն, որ 11-րդ դարում իշխում են երկու որոշ հոսանքներ, որոնցից մինը հավատարիմ է մնում արևելյան ոճին, իսկ մյուսը կրում է բյուզանդական արվեստի ազգեցությունը:

«Եթե մենք ի նկատի ունենանք հայ ձեռագրական արվեստը մինչև մեր գարի վերշերը և մինչև իսկ մի գարի կեսերը, — գրում է Հմուտ արվեստագետ Գարեգին կարողիկոսը, — կտեսնենք, որ նորա բնույթը տարբեր է, քան թե այնուհետեւ երևան եկող երեւութիւններն են կիլիկյան շրջանում: Մինչ այդ հայ արվեստագետները վրձինել են իրենց գեղարվեստական ուշագրավ գործերը: Ահա և Դարձարիկի ու նրա հետ կապված Գոների և Ակների վանքերը, որոնք առանձին փայլ են ստանում զարդարությունն ու մանրանկարչությունը: Ուշագրավ է և այն, որ այդ զպրոցները հովանավորում են Կիլիկիայի հայ թագավորները, իշխաններն ու բարձրաստիճան հոգութականները—Հեթում Ա արքան, Լևոն Գ և Թագուհի Կեռանը, Հեթում Բ, Կոստանդին

նշված նկարներից ու մանրանկարներից շատերը, որոնք գծած են բարձր արվեստով և հիացնում են գեղարվեստագետներին, ցայտուն գաղափար են տալիս ժամանակի նկարիչների նրբին ձաշակի և բարձր արվեստի մասին:

Գիտենք և այն, որ 10—14-րդ դարերում գրված ձեռագրերի որոշ նկարներն ուշագրավ են իրենց ուրույն բովանդակությամբ: Նկարիչները վրձինել են ոչ միայն կրոնական, այլև աշխարհիկ նյութեր: Այդ սրանցին մանրանկարներում տեսնում ենք հովիքի, գառնարածի, նախապատճենի կերպարներ իրենց ինքնատիպ տարագներով: Մանոթանում ենք նկարների հետ, որոնցից շատերին առանձին փայլ են տալիս ուսկեցիանությունները:

Այստեղ առաջ է գալիս մի ուշագրավ հարց: Ըստիք գրչության, զարդարչության ու մանրանկարչության արվեստները Հայաստանի ո՞ր վայրում են զարգանում: Միջնադարում առանձին փայլ են ստանում Արևելյան Հայաստանի նշանավոր կենտրոնները՝ հոչակավոր Տաթևը, Գլաձորը, Հաղպատար կամ Նորավանքը, Տարոնը և Աղթամարը: Ել չենք ընդգծում Սկեռան ու Կարմիր վանքը: Ահա արվեստի այդ նշանավոր կենտրոններում հայ վարպետ մանրանկարիչներն ստեղծագործում են մեկը մյուսից ավելի գեղեցիկ նկարներ: Նշենք և այն, որ 12-րդ դարի կեսերից հետո ձեռագրերը գովում են էլ ավելի գեղարվեստորեն և զարդարվում նույր նկարներով: 12-րդ դարի վերջերին՝ 1197 թվին գրված, նկարչական արվեստի մի զլովագործոց է Սկեռայի Ավելատարանը, որի մոտիվների ճշխությունն ու զանազանությունը, գույների նրբությունը առանձին երանգ են տալիս ձեռագրին:

13-րդ դարի երկրորդ քառորդից հետո Կիլիկիայի իշխանության շրջանում, հայ գրչության, գեղագրության և մանրանկարչության արվեստներն իրենց բարձրագույն զարգացման շրջանն են ապրում: Եվ դա շնորհիվ գիտության ու արվեստի լավագույն մեծ զպրոցների և բարձրագրական-տնտեսական բարենպատ պայմանների: Ահա գրանցից Կիլիկիայում Հոռմլլայի հայտնի գպրացը, ուր հայ արվեստագետները վրձինել են իրենց գեղարվեստական ուշագրավ գործերը: Ահա և Դարձարիկի ու նրա հետ կապված Գոների և Ակների վանքերը, որոնք առանձին փայլ են ստանում զարդարությունն ու մանրանկարչությունը: Ուշագրավ է և այն, որ այդ զպրոցները հովանավորում են Կիլիկիայի հայ թագավորները, իշխաններն ու բարձրաստիճան հոգութականները—Հեթում Ա արքան, Լևոն Գ և Թագուհի Կեռանը, Հեթում Բ, Կոստանդին



ԱՐԵՎԱԿԱՆ ՀԱՅՈՒԹ ՎԱՐԴԱՐՈՒՄ ՅԱՅԻ ՀԱՅՈՒԹ

Մարմոսի Ավելացանի առաջին էջը
Գրի և ձադիող՝ Խոհանոսու, գայր՝ Հռոմուսի վահե,
1231 թ.:
(Հայկ. ԱՊԲ Գևո., մատեն. ձեռ. № 1519)

Ա կաթողիկոսը և ուրիշները, Այդ գեղասերների և մենքինսաների նյութական զո՞ղովության շնորհիվ կիլիկյան հայ գեղագրության, մանրանկարչական և գրչագրական արվեստները կերտում են պարծանքի արժանի գեղացկություններ։ Այդ ձևուագրներց հիշատակության արժանի են Հեթում Բ-ի ձաշոցը, Հովհան Երզնկացու փառահեղ Աստվածաշունչը, Առն Գ-ի ձաշոցը և Հատկապես Ներսես Լամբրոնացու համար նկարագրված նարեկը, որոնք հայ գեղարվեստի սրանչելի ստեղծագործություններ են։ Առանարարակ, կիլիկյան շրջանում առաջ են գալիս տաղանդավոր նկարիչներ, մանրանկարիչներ, վարպետ գեղագրեր, ծաղկողներ, սոկողներ, որոնց վարպետորներ մշակած գեղարվեստական ստեղծագործությունները մարմնացնում են հայ ժողովրդի մանրանկարչական և գեղագրական արվեստի վսեմ գծերը։ Առաջանցքը հայ գրանցեց փայլուն կերպով օժտված Հովհակավոր մանրանկարիչ Մոռու Ռոսլինը, 13-րդ դարի լուսապատկ ու բեղմնավոր մի արվեստագետ, որի անունը սերտ կերպով կապված է մշակութային մի

մեծ կենարունի՝ Հռոմեացի գարսցի արվեստի հետ, և որի պարծանքն է նկարիչը՝ Կիլիկյան արվանդավոր նկարիչների շարքում պատվավոր տեղ է գրավում նաև մի այլ վաստակավոր և պարծան արվեստագետ։ Գայ 14-րդ դարի առաջին կեսի իրապաշտ մանրանկարիչ Մարգիս Փիծակին է, նաև իր գրձինի ստեղծագործություններով հարստացրել է հայ մանրանկարչական արվեստի զանձարանը։

Մակայն կիլիկյան մանրանկարչական արվեստի վաստակավոր ու պարծանքն է կապմում Բորսու Ռոսլինի ուսուցիչ և առաջնակարգ վարպետ մանրանկարիչ Հռոմեանները, որի վրձինած հոյակապ մանրանկարները ոչ միայն կիլիկյան նկարչական արվեստի ամենագեղցիկն էնքնին են, այլև իրենց ինքնափակության հայերն են, առաջ բրենց ինքնափակության խորությամբ և երանգների անման ներդաշնակությամբ հայ մատանաում արվեստագետներին։

Արվեստի վաստակավոր աշխատող է, Ա. Գուտնովան «Հին Հայկական մանրանկարչական» ալբոմի նկարչության նովագծում զանում է, որ կիլիկյան հայ մանրանկարիչները, առանձնապես Ռոսլինը, առաջ են բաշել և լուծել այնպիսի հարցեր, որոնք համագյուտ մշակվել են միայն Վերածննդի ժամանակի նրա կարծիքով, Ռոսլինը «առաջին հաստատում բայերն է, արել Վերածննդյան գարաշընի արվեստի ուղղությունը»։

Առաջ այդ անվանի նկարիչների շարքում իր ուրուցն տեղի ունեց վարպետ գրչագիր, գեղագիր և մանրանկարիչ Խոհանոսուր:



13-րդ դարի անվանի մանրանկարչի կյանքի ու ստեղծագործության հիմնական էջերի մասին ավելի հստակ գաղափար տալու համար այսուհետ առաջ բերենք հայ մամուլում արձանագրված բանսսիրական դրականության պատկերը։

Գետ 1933 թվականին ներուապեմի «Արօն» ամսագրում (Հունիս-Հոկտեմբեր) տաղանդավոր մանրանկարչի մասին լուսում է տեսնում մի ուշագրագ հոդված։ Օրիու տարի անց, 1935 թվին, «Եղնատիոս մանրանկարիչ» և նոյնուկանց տոհմը՝ վերնագրով, «Արօն» ամսագրական նյութը լուսում է տեսնում առանձին պրակով։ Ապա 1936 թվին, նկարչի մասին կարդում ենք նաև «Հայաստանի կոչնակ» շարաթաթերթում։

1. Առաջին հաստատում քայլերի պատիվը պատկեռում է ոչ թե Բորսու Ռոսլինին, այլ նրա ուսուցիչներ Հովհաննեսին և Կիրակոսին։

Այդ երեք արժեքավոր նյութերի համար պարտական ենք հայ արվեստի փայլուն և վաստակավոր մշակ Տ. Գարեգին կաթողիկոս Հովհաննին: Երեք տարի հետո, 1939 թվին, Արշակ Զոպանյանի «Անահիտ»ում (№ 3) «Իզնատիոս մանրանկարիչ» խորագրով մի հոդված է գրում Հարություն Քյուրքյանը, որը բազմաթիվ սխալներ է թույլ տալիս ինչ՝ հիշատակարաններում և ինչ՝ տրված բացատրությունների մեջ: Այսուհետեւ անցնում է ամբողջ 4 տարի և առաջ 1943 թվին, «Հայաստանյաց Եկեղեցի» ամսագրի № 9-ում Տ. Գարեգին կաթողիկոսը Իզնատիոսի մասին լույս է ընծայում մի նոր հոդված: Դա այն շրջանն էր, երբ Ապահանի նոր-Զուտա արվարձանում ուսումնասիրում էի Ամենափրկիչ վանքի մատենադարանում գտնված № 36 Իզնատիոսի վարպետ գրչով գրված և հմուտ վրձինով նկարագրված մակաղաթյա Ավետարանը: Այդ նյութը տպագրվեց Թիֆրանում «Հայարակ»ով «կույս» ամսագրի 1944 թվի 11—12 և 1945 թվի 1, 2 և 3 համարներում: Այսուհետեւ, 1947 թվին, արվեստագիտունի օրինադր Արքարքի Տեր-Ներսեսյանը «Բազմավեպ»-ի № 11—12-ում անդրագարձավ Ա. Պաղարի (Վենետիկ) № 151 ուսկըով և երանդ-երանդ խառնածով զարդարեալ Ավետարանի բանդակությանը:


Իզնատիոս մանրանկարչի մասին տեղեկություններ կարգում ենք նաև Գարեգին կաթողիկոսի «Հիշատակարանք ձեռադրաց» արժեքավոր հատորի 768, 898—900 և 909—926 էջերում:

Հայ մամուկում լոյս տեսած բանսիրական գրականության ավյաններն էլ վկայում են, որ 13-րդ դարի նշանավոր մանրանկարչի և գեղագիր Իզնատիոսի գրչական և նկարչական արվեստի վերլուծությամբ գրադիլել են ոչ միայն Գարեգին կաթողիկոսը, այլև Ս. Մելիք-Հակոբյանը «Բազմավեպ»-ում (1924 թ., էջ 325—328), Հ. Քյուրյանը՝ «Անահիտ»-ում և առողերս գրող՝ «Ուրաց»-ում:



13-րդ դարի մանրանկարչի և զրի Իզնատիոսի մանրանկարչական գործունեաթյանն ու գրչության արվեստին պատիվ են բերում երեք հայանի գեղարվեստական արմեք ունեցող ձեռագրեր, որոնք ընդգրկում են երեք տարրեր թվականներ՝ 1214, 1232 և 1236: Այդ թվերն էլ պարզում են վաստակավոր նկարչի ստեղծագործության ժամանակաշրջանը:

Գրչագրերից առաջինը Հավուց թափ Ավետարանն է, երկրորդը՝ Բազնայրի, երրորդը՝ Խծկոնք վանքի: Մեծատաղանդ ճար-



Պուլատու Ավետարանի առաջին էջը Գրի և ծաղկող Իզնատիոս, վայր՝ Հռովման վանք, 1231 թ.:

(Հայկ. ԱԱԾ Պետ. մատեն. ձեռ. № 1519)

տարապետ Թորոս Թորամանյանն իր «Հայկական ճարտարապետություն» խորագրով գրքի 310-րդ էջում Խծկոնք պատմական վանքի մասին արձանագրել է այսպես. «Տեկոսի Հնագարյան եկեղեցիի արհմտյան կողմը, երկու կամ երեք կիլոմետր հեռավորության վրա, Տեկոսի գետի ձորի բարձունքներում հիմնարկված է Խծկոնք կամ Խծկոնք վանքը, որ ներկայիս ծանոթ է Բեշ-բիթսե անունով»:

13-րդ դարի հայունի այդ մեծ վանքը մեկն է այն լուսավոր կենտրոններից, որը իր ժամանակի մասավոր շարժման մեջ պաշտպահ դեր է կատարել և որի միջոցով առանձին գուրգուրանքով ու մեծ խնամքով պահվել են հայ արվեստի ու գրականության թանկագին շատ նմաւշներ: Այդ լավագույն ձեռագրերից մեկն է 1236 թվականին գրված Ավետարանը: Առաստաղի Իզնատիոսի երեք ձեռագրերն են, որոնք հարուստ են ընդարձակ հիշատակարաններով և պատմական-ժամանակադրական տեղեկություններով, ընդգրկում են մի կարենը հան-

դամանք, որ Խղնատիոսը հանդիսացել է ոչ միայն Հռումսոսի փանքի² (Անիի մոտ), այլև Հավուց Թաոփ և Խծկոսը փանքի դրիչ և մանրանկարիչ, Նկարչական այլ թաճկապին Առաջրերի գեղարվեստական մանրանկարները և սրբների երկաթազմբերն այսօր ցայտուն զարգացար են տալիս Խղնատիոսի մանրանկարչական և գրչական ողեղագրական արվեստների նվաճումների մասին, մի արվեստագիտի, որը հանդիսաւում է 13-րդ դարի նկարչական մշակույթի ականավոր նկարիներից և գրիչներից մեջ կը ի որի ստեղծագործություններն արժանի են ուսումնասիրության:



Մանրանկարիչ և գրիչ Խղնատիոսի արվեստը պատկերող ձեռագրերից մեկը պահպատճեց Վ. Ղազար կղզում՝ Գալուստ Է. Ավետարանն է, որ 13-րդ դարի մանրանկարչական արվեստի նմուշներից մեկն է: Հիշատակենք նաև Երևանի Պետական մատենագրարանում (Զեռագրատանը) գանդող երկաթագիր մարդագաթյա գրչագիրը՝ № 1519.

Նկարչի մի այլ գրչագրական և մանրանկարչական արվեստի կարևոր աշխատանքը խնամքով պահպատճեց է Նոր-Ջուղայի Ս. Ամենամերկի վանքի մատենագրարանում, Գալուստ Է. Ավետարանում՝ վանքորդ մագաղաթյա Խծկոնք վանքի Ավետարանն է, որ իր նկարչական և գրչագրական արվեստով հիշյալ մատենագրարանի 13-րդ դարում զրված ձեռագրերի շարքում ուրույն տեղ է գրավում:

Սակայն Խղնատիոսից մինչև օրս Հայունաբերված ձեռագրերի պատկերը լրիվ դեմքու առումով պեսք է ասեմ, որ նրա գրի և վրձինի հետաքրքրի մեկ գործը գտնվում է Զիկագոյի Համբարանի մատենագրարանում, իսկ մյուսը՝ Կալիֆորնիայում և մասնավոր սեփականությունն է Վ. Սիմոնյանի:

Խղնատիոսի այլ ձեռագրերի մասին զաշափար կազմելու համար պետք է կարդալ նաև «Հայաստանի կոչուակա-ում (1936 թ., էջ 492) Գարեգին Կաթողիկոսի հոդվածը»:

Մանրանկարչի վրձինից ու գրից ուրիշ դորձեր ինձ հայտնի չեն. գուցե անհայտացել են կամ բաղարական փոթորիկների ժամանակ ոչնչացել:



Խղնատիոսի մանրանկարչական և գրչագրական արվեստները զնահայտել են արվեստուգետ բանասերները: Դրանցից առանձնապես նշում ննիք հմուտ բանասեր,

2. Խղնատիոսի մշտական բնակության փայրի Երևանուուր փանը:

արվեստագիտ Տ. Գարեգին Կաթողիկոս Հովհաննելին, որ «Հայաստանյաց Եկեղեցի» ամսագրի № 11-ում (1940 թ.) մանրանկարչի մասին գրել է համեմալը. «... Խղնատիոսի մասին մինք ունենք համար ուսումնասիրություն. Հայտնի են նորու մի բանի զեղագրական և գեղարվեստական արժեքը ունեցող գործերը... Բայց նա ունի և ուրիշ գործեր էլ բանասիրության գեղ անհայտ... Երեք հաստատում թվական ունինք Խղնատիոսի կյանքի հետ կապված՝ 1214, 1232 և 1236. առաջինը Հավուց Թաոփ Ավետարանի թվականն է, երկրորդը Թաղմայրի, երրորդը Խծկոնքից. Երեք ձեռագրերն էլ ընդունակ հիշատակարաններով և պատմական ժամանակարգական տեղեկություններով: Բարեբախտաբար զիրքին Ավետարանի մեջ հիշատակված է նաև Խղնատիոսի աշակերտը՝ Հովհաննելի»:

Բանանք նաև Վենետիկի Ս. Ղազարի Միսիթարյան միաբանության պաշտոնական ամսագրիր՝ «Բազմավեպ»-ի 1947 թվի № 11—12-ը, որտեղ 270-րդ էջում, գեղարվեստագիտ օրիորդ Սիրարփի Տեղ-Ներսեսյանը մանրանկարիչ Խղնատիոսի մասին գրել է այսպիսի բնորոշ առղերք... Նկարչության համար այս շրջանի (13-րդ դարու սկիզբը) աշքառու դեմքն է Խղնատիոս նկարիչը, որ աշխատած է Հոռոմոսի և Հավուց Թաոփ նշանավոր վանքերուն մեջ: Գալուստի կաթողիկոս ուսումնասիրած է այս նկարչի գործունեությունը, և այս գործունեության նմուշներն մեկն է Ս. Ղազարութիվ 151 Ավետարանը «ոսկուվլ և երանդերանդ խանուածով վարդարեալ»: Բյուզանդական պղկեցությունը և Խղնատիոսի ոճը ավելի զուտ հայկական և արևելյան է»:



Խղնատիոսի մանրանկարչի նկարագրը գրչագրերի էջերն ուսումնասիրող բանասերը գտնում է 13-րդ դարաշրջանի ոչ միայն հայ մանրանկարչության, գեղագրության ու զըրծության արվեստների, այլև հայ ժողովրդի պատմության, լիզզարանության և աղքաղության վերաբերյալ թանկագիւն նյութեր, երևույթներ, որոնք բարձրացնում են նրա ձեռագրերի գեղարվեստական և հասարակական արժեքը: Այնասարակա, Խղնատիոսի ավանդ թողած զրչագրերն անդնահատելի հիշատակարաններ են, որոնք զալիս են հարստացնելու հայ արվեստի պատմության էջերը»:

Խղնատիոսի ձեռագրերին յառանձին փայր են տալիս զարդագրերը, որոնք հայ մանրանկարչության պատմության մի կարևոր էջն են կազմում: Այսուղի տեսնում ենք կը կրաշափական և հյուսվածքի հիմնական մոտիվ-

ները, երևույթներ, որոնք մանրանկարչական տառերի էական հատկանիշներ են: Զարդերի զանազանությունը, ճոխությունը, ներդաշնակությունը և մանրանկարչական պես-պես գծագրությունները վկայում են իդնատիսի վառ երևակայության և գեղագիտական ճաշակի մասին: Առհասարակ, նրա ձեռագրերի զարդագրերը մանրանկարչի տաղանդի և հայ արվեստի գեղեցկության ցայտուն ապացույցն են:

Իդնատիսի վրձինած աստվածաշնչական գունագեղ նկարներից շատերը զաղարկեստական նուրբ գործերի տպավորություն Խն թողնում: Այդ պատկերներից հատուկ ուշադրության արժանի մն մի շարք դիմանկարները, որոնք գրավում են մեզ իրենց նրբությամբ: Այդպես են, օրինակ, 1236 թվականին, Տեղորի պատմական մեծ վանքում գրած գրչագրի «Խաչելություն» և «Ծննդաց» նկարները: Վրձինի հաջող գծագրություններ են նաև «Թրիստոսի ընծայումը Տաճարին», «Հարություն Ղազարու», «Չորս ավետարանիշները», «Միմեռն ծերումիս և այլն, որոնք ընդգծում են նկարչի վրձինի իրավաշտական ընուլիթը: Այնաև արվեստագետի վրձինը կերտուի է յայտուն կերպարներ, արտահայտելով նրանց բարեպաշտ և շերմեռանդ ողին: Դրանցից մի քանիսի բնարոշ դեմքերի արևելյան արտահայտությունները իրենց ուրույն դիմագծերով՝ կարճ մորուր, արտահայտիչ աշխեր, ումանց էլ դիմանկարների մելամաղձու արտահայտությունն ու լրջությունը կամ վեհությունն ու նրբությունն առանձին գրավչությունն են տակա կերպարների դիմերին և վկատու, որ Իդնատիսը 13-րդ դարի յավագույն դիմանկարիչներին մեկն է:

Արվեստի նրբություն և գեղեցկություն ունեն նաև Իդնատիսի ձեռագրերի խորանազգերը, որոնք որքան պարզ են, նույնարան էլ գեղեցիկ են և տպավորիչ Ընդդեմնը և այն, որ վրձինված նկարներում տեսնում ենք ո՞չ միաւն ինքնատիպ արվեստ, հարուստ, բաղմազան և գեղեցիկ հուսավածք, Հատկանիշներ, որոնք վկայում են 13-րդ դարի նկարչի վրձինի հմտության մասին:


Իդնատիսի մանրանկարները և նկարչական պես-պես տառերը, իրենց երկրափական, բուսական և հյուսվածքի մոտիվները, անկարսկած, չի կարելի համեմատել:

3. Այստեղ ընդգծենք մի էական հանգամանք: Բուն Հայաստանի վարպետ գրչագրերի սուրբդրական նկարների դիմագծերն իրենց վրա կրում են զուտ արելյան գրոշմ, խոշոր գծեր, մուց, պղեծագույն դեմքեր, մեծ մասամբ մորուսավոր, ունեն հայկական երեսներ, իսկ կելիկյան շրջանի շատ նկարներում նկատվում է տատինական աղդեցությունը՝ դեմքերը մաքուր, ածիլված, զգեստները կլասիկ:

օրինակ, Երուսաղեմի № 2556, Վենետիկի Ս. Ղազարի № 1400 և Եշմիածնի № 369 (գրված 1066 թ.) ձեռագիր ալեստարանների նատ, որուր հայ մանրանկարչական արվեստի գլուխգործոցներ են: Սակայն, մի հանգամանք պարզ է, որ Իդնատիսը, շնորհիվ իր հմուտ վրձինի, թե՛ մանրանկարչության, թե՛ գեղագրության և թե՛ գրչության արվեստները հասցը է գեղարվեստական որոշ բարձրության: Այդպես է նրա արվեստը, օրինակ, 1236 թվականի ձեռագրում, որտեղ նա փայլում է իր վրձինած մի շարք մանրանկարներով ու զարդագրերով: Նրբին գեղագրության դրոշմ են կրում առանձնապիս գրչագրի Գ, Ս, Թ մեծադիր գումագեղ և ուկեզօծ մանրանկարչական գլխատառերը և նրանց հաջորդող փոքրատառերը, որոնք երկրաշափական և հյուսվածքի մանրանկարչական գլխատառեր և նրանք հաջորդող փոքրատառերը, որոնք մերժինած մի շարք մանրանկարչական գլխատառերով ու պատմագրերով: Բարդ չեն գրչուները, սակայն զարդերը գրավիչ են, քննությունը և այլք երանդների հարուստ և այլք բարձր և այլ երանդների սիրության ծաղկումով: Բարդ չեն գրչուները, սիրությունը և նուրբ, ինչպիս կիլիկյան շրջանի 13-17-րդ դարերի շատ ձեռագրերի զարդարերը: Առհասարակ, Իդնատիսը զարդարերի մեջ շատ կարեն դիրքի են կատարում ո՛չ միայն գույները, սակայն զարդերը գրավիչ են, քննությունը և այլք ներդաշնակ ու սիրության ծաղկումով: Բարդ չեն գրչուները, սիրությունը և նորա արվեստի նըրբության մասին: Ընդհանրապես, նկարչի գրավագրերը համարական պատմությունները, առանձնական մտադիմները, որոնք իրենց լրությամբ վկայում են Իդնատիսի մանրանկարչական հմուտ վրձինի և նրա արվեստի նըրբության մասին: Ընդհանրապես, նկարչի գրավագրերը համարական պատմությունները, սիրությունը և գեղագրության լավագույն նմուշներ են:

Արձանագրերն եւ այն, որ Իդնատիսը մանրանկարչական և գեղագրական արվեստում նկատելի Ան նրա անհատական ստեղծագործության ուրուսն զժերը: Նկարչի առանձնահատուկ էությունը, առավելությունը և գնահատելի դիմն այն է, որ նա մերենայական կերպով չի հնաել իր ժամանակի միայն սովորական, ընդունված ձեռին, այլ ստեղծագործել է ինքնուրուին, անձնական զժերով և արտահայտություններով: Նայի՞ք Ենրա վրձինած գումագեղ, գրավիչ, սիրուն գեղագրերին, նուրբ գիմանկարներին, խորանների գեղարմատական ձեւերին, մանրանկարչական գեղեցիկի արվեստին ու զարդարանքներին, որոնք իրենց վրա պահում են նկարչի ինքնուրուին դրոշմը և հայկական արևելյան գեղարվեստին ու ոմի առանձնահատություններու: Իդնատիսը արվեստի ընույթը, իր էությամբ, արևելյան է և բուսաբիրիան պատկերագործական նույն երեխույթն է ընդգծել Տարեղին կաթողիկոս

ՎՐԱՆԱԿԱՐԱՐՈՒՅ	ՍԱԿԱՎԱՐԱՎԱՐՈՒՅ
ՎՈՎՈՎՈՐԵ ԽԵՅ	ԱՎԱԿԱՎՈՐԵ ԽԵՅ
ԵԼՎՈՎԵ ՃԵՅ	ԱՎ ԱՎԵՎԵ ՃԵՅ
ԳՈՎՈՎԵ ՃԵՅ	ԲԱՅ ՅԱՅ ՃԵՅ
ԵՐԱՎԵՐԵ ՃԵՅ	ԱՎԱԿԱՎԵ ՃԵՅ
ԼՈՎԱՐԵ ՃԵՅ	ԳՈՎԱՎԵ ՃԵՅ
ԱՎՈՎԱՐԵ ՃԵՅ	ԵՐԱՎԵՐԵ ՃԵՅ
ԵՐԵՎԵՐԵ ՃԵՅ	ԵՐԵՎԵՐԵ ՃԵՅ
ԼՈՎԵ ՃԵՅ	ԵՐԵՎԵՐԵ ՃԵՅ
ԵՐԵՎԵՐԵ ՃԵՅ	ԵՐԵՎԵՐԵ ՃԵՅ



23

Մի էջ Պուկասու Ավելարանից

Գրիշ և ծաղկագոյն բազմաթիվ գայլեր և ծառաւնութիւն պատճեն 1231 թ.:

(Հայկ, ՍՍԸ Գլուխ, մասեն, ձեռ. Ա 1519)

Հովմանիւնք: Ահա նրա տեսակիւր. «Բայց ավելի կարեռն այն է, որ... Իգնատիոսի արվեստը գուտ արեւելյան բնույթ ունի. ազատ բյուզանդական ադրբեյլիւնից, և ավելի մոտ սասանյան և միջագետյան-արարական ավանդների... նկարներն ավելի նմանություն են բերում սիրիական պատկերագրության, բայց բյուզանդականին: Այսպէս են առասարակ մեր 13-րդ դարի հայտնի ավելտարանները, ինչպես Հաղպատի, Թարգմանչաց և մյուս իշխանական ձեռագիրները»:

Իգնատիոսի նկարներից երկում է, որ նա հմուտ ու ծշորեն արտահայտել է հայկական ինքնուրություն ոմք, ապրել է նա հայ արվեստով և, որ էականն է, հարազատորեն պատկերացրել է այս մանրանկարչության և գեղագրության ոպին ու էությունը: Կարճ Իգնատիոսի մանրանկարների ու գեղագրերի մեծ մասը պարզ, բայց խորունկ ստեղծագործության նմուշներ են, որոնք իրենց լուսացրել են կայսերական և արքայական ամրությունները, որին ատու նրա մշակված, վարպետ մրգինի մասին:

Իգնատիոսի նկարչական արվեստով իշխում են զիսավորապես կապույտ, կանաչ, կարմր, զեղին, ոսկեզօծ երանդները, որոնք առանձին ազնվական մասն երանդների վերաբերյալ ավագ են, ապա արվեստում գերիշխող կապույտ, կանաչը, մատամբ վիզնինը ու միայն լուրջ են, տպավորիչ, ու միայն Արևելքի վերաբերյալ արվեստում գերիշխող հաշտակի և մարփ արտահայտություններ են, այս իրենց տպավորապետյամբ համապատասխանում են նկարչության մեջ արտահայտված ժամանակաշրջանը Առանձնապես ընդգծելի է կապույտ երանդը, որ նկարիչը զործազրի է ավետարինիշների պատկերների, ինչպես և այլ բուսական զարգարանների, խորանների շրջազարդերի և զարգանդարների մեջ: Բայց զա պատասկան մի երեսով չէ: Կապույտ երանդը խոչընդունակություն գեր է կատարում նկարչական արվեստում, մի հանդամներ, որը խորապես հասկացել են ու միայն հայ պասական նկարիները, որինակ՝ Գրիգոր Երեցը, այն նորագույն հմուտ արվեստականները: Այդ տեսակիւրից հատկապես մեր շշար զնում ենք տաղանդավոր նկարիչ Մարգիս Խաչատրյանի նկարչական արվեստի վրա, որը բարոններով աննման կապույտ երանդում զեղարիխանության առանձնահատուկ տեղը, լայն կերպով օգտագործել է այն իր նկարներում: Ահա թե ինչու նրան կարելի է անվանել կապույտ զույնի բանաստեղծնկարիչ: Եվ իրոք, կապույտը, որ այնպես գերազանցորեն իշխում է նրա արվեստում, ու միայն առանձին փայլ է տալիս նրա նկարներին, այդի բարձրացնում է նրանց նկարչական արժեքը:

Նույն երեսով մեր տեսական մենք Իգնատիոսի նկարներուն: Կապույտից հետո հարմիքն ու կանաչը մեծ շափով իշխում են նրա ու միայն նկարներում, այլև խորանազարդերի ու զարգանդարների մեջ: Նույնպես սեղակ աշքի են ընկնում զեղին, սպիտակ, սև, սկեզօծ և այլ երանդները:



Իգնատիոսի գրչության արվեստի հատկանշական զնները պարզեցուց առաջ հիշենք, որ Մհերապյան երկաթագրով զրված հին ձեռագրերը, մինչև 10-րդ դարը, անզարդ են և անպատճեմ, իսկ կիրիկյան շրջանի հնագույն ձեռագրերն են երկաթագրի լին: Հետո միայն մշակում և տիրապետող է զարգում կիրիկյան բոլորագրերը, որ տարբեր է արևելյան բոլորագրից, որին ատու են նաև անցման երկաթագրի:

Այդ տեսակետից ուշագրության արժանի է նաև Իգնատիոսը, որի գրչության արվեստի գեղեցկությունը տեսնում Անք. Կրտս արժեքափոր ձեռագրում՝ Դա 1236 թվին ընդօրինակված Ավետարանն է, որ իր գրչության արվեստով մի սրբանչելի ստեղծագործություն է, Աքնտեղ, սկզբու մինչեւ վերջը, 404 մեծադիր ընտիր մագաղաթների վրա, սև, թանձր, իսկ նոր ստոլից սկսող նախաղասությունները հարմիկ թանաքով և երկոյուն դրոշմած նույն երկաթագրերը շատ գեղեցիկ են ու ներդաշնակ: Գրված են արուակարդ իմամրով, տառերը չափաղանց նման Ան միմյանց և տողերն այնքան մարդարտաշար, որ միանգամայն տպագիր գլխատառերի տպագրություն են թողնում, մի երկույթ, որը ոչ միայն բարձրացնում է ձեռագրի գեղարվեստական արժեքը, այլև վկայում, թե 13-րդ դարի առաջին շրջանում երկաթագիր գրչության արվեստը Տեղորի վանքում ինչպիսի նրբության և բարձր զարդացման է հասել, միաժամանակ վկայում տաղանդավոր արվեստագիտ Իգնատիոսի ուրուցն ձեփակերպված զրչի հմտությունը: Առասարակ Ավետարանի երկաթագիր տառերն իրենց նրբին վեղագրությամբ և ներդաշնակությամբ ցայտուն գաղափար են տալիս Իգնատիոսի մշակած և ուրուցն կերպարանք ստացած գեղեցիկ ձեռագրի և նրա գրչության արվեստի բարձր աստիճանի մասին: Այդ սրանչելի երկաթագրերով նա զարկ է տվել իր ժամանակի գրչության արվեստին: Սակայն, պետք է ասել, որ Իգնատիոսն ունի տարրեր գրչության գրություններ: Նրա գրչությունը Բագնայրի Ավետարանի մեջ տարրեր է նույն ձեռագրի հիշատակարանների գրչությունից, թեև Կրկուսն էլ իր գրչին են պատկանում: Ահա թե ինչու 13-րդ դարի տաղանդավոր հայ գրչագրերի և գեղագրերի շարքում նա իր պատվավոր տեղն ունի:



Իգնատիոսի մանրանկարչական արվեստում հշշվում են նաև ազգագրական արժեքափոր նյութեր: Դրանք ավանդական պատկերացումներ են: Մալքավոր զինունիքի և զարդարանքների մեջ արտացոլում են միայն տեղական բնույթին ու արվեստը, ինքնատիպ վրձինի մնկախ ձևակերպությամբ: Հատկապես ո՛րքան վեղեցկությունն և զույների սրանչելի ներդաշնակությունն կա ավետարանիների կլասիկ հագուստների և ծալքերի մեջ, որոնք իրենց ուրուցն ունով ցայտուն գաղափար են տալիս ո՛չ միայն ժամանակաշրջանի տարագների, այլև նրանց պես-պես ձևերի, կտորների և կերպարանների մասին: Եվ եթե ցանկանում ենք ժանուարան, թե ի՞նչ էր ներկայացնում հայ ժողովրդի տարագն այդ



Հովհաննես Ավետարանի առաջին էջը
Գրիլ և ծաղկող նկատիոն, վայր՝ Հովհաննես,
1231 թ.:

(Հայկ. ԱՍԹ Պետ. մատեն. ձեռ. N 1519)

դարաշրջանում, հարկավոր է դիմել իգնատիոսի նկարները, որոնք իրենց ամբողջությամբ ցայտուն ու պերճախոս աղբյուրներ են: Այնտեղ կենանի գույներով վրձինված են ժամանակաշրջանի որոշ տարապները, իրենց բնորոշ, առանձնահատուկ գույներով, նրբությամբ և գեղեցկությամբ, որոնք ոչ միայն գաղափար են առիս ժամանակի պկեստի տիպիկ ձևերի, այլև ժողովրդի ձաշակի ու նրբության մասին: Այդ տեսակետից էլ իգնատիոսի ձեռագրերի ներկարներից նկարները ոչ միայն պատմական, այլև ազգագրական խոշոր արժեք ունեն:



Անժիստելի է, որ ձեռագիր հիշատակարանները ամենից վավերական աղբյուրներն են մեր գեռ զրոված իսկական պատմության համար: Այդ տեսակետից էլ դրանք խոշոր արժեք են ներկայացնում: Այդպես է, օրինակ, Իգնատիոսի դրած Խծկոնի ժագաղաթյան ձեռագիրը, որի արժեքալիքը և հատկանշական Արևույթներից մեկը պատմական ժամանակագրական տեղեկություններն են,

սրոց մեջ կան թեև սեղմ, բայց բնորոշ տուղեր հայ ժողովրդի հեռավոր զարերի հերուսական պատմության համար: Դա Կիլիկիայի Հերուս Ա-ի թագավորության (1226 թ.) և միաժամանակ թագավական մոնղոլ-թագար ցեղերի գերիշխանության ու հարստագրությանը մասնակի ժամանակաշրջանն է:

1236 թվին, թաթարների 20.000-անոց մի զորաբանակ, Զարմաղան զօրապետի առաջարդությամբ, արշավում է գեղի Անդրկովկաս: Պարմակասանը նվաճելուց հետո Զարմաղանը մտնում է նախ Մուղանի տափատանք, ապա Հարձակվում Գանձակի վրա: Զայած բաղադրի բնակիչները — հայերը, պարսիկները և ապրեցանցիները — ուժեղ դիմագրություն են ցույց տալիս, բայց դրսից օքնություն շտանալով պարտվում են Մանզիները զրագում են քաղաքը, բնակիչներին կոտորում և մի մասն էլ գերի տանում: Այսուհետև Զարմաղանի բանակը, Արեք տարբեր զժերով, արշավում է Հայաստանի, Վրաստանի և Աղքարշանի զանազան շրջանների վրա: 1236 թվին, թաթարների արյունաբու խմբերը, Զարմաղանի առաջնորդությամբ, առաջին անգամ մտնում են Հայաստան: Նրանք միաժամանակ պաշարում են կոտոր և Մորակիրը: Մարսակիլի տեսարան է ներկայացնում այն մեծագույն, անմորուս, նեղաշիլի, տափարիթ, թանձրաշուրբն, բռկուն և սրածայն բարբարուների բազմությունը, որոնք անհնանա կոտորում են, կաթնակեր մանուկներին բարերին խփում, մատաղահաս աղջկներին հափշտակում:

Հայոց աշխարհը ծածկվեց դիակներով, — գրում է Կիրակոս Գանձակեցի ժամանակակից պատմիչը, — ոչ ոք չկար, որ թաղեր նրանց, որովհետև կենդանի մնացողներն անծանոթ տեղեր թաքշում էին անօրենների սրից ազատվելու համար:

Այսուհետև մոնղոլական զորերը նվաճում են Արարատյան գաշտը, Շիրակը, ապա զիմում զեպի Բագրատունյաց մայրաքաղաք Անին Նախքան քաղաքի պաշարելը, Զարմաղանը դեսպաններ է ուղարկում անցիներին, որ անմիջապես անձնատուր լինեն, բայց նրանք վստահ իրենց ուժի և քաղաքի հաստ պարիսպների վրա, ոչ միայն մերժում են առաջարկը, այլև սպանում ուղարկված զեսպաններին: Զարմաղանը, զայրացած, Անին պաշարում է: Հայ մեծամեծները, դժբախտարար, բաղադր հանձնում են թշնամուն, որի հետևանքով մի սոսկալի տեսարան է բացում: Թաթարները մտնում են Անի, տներն ու եկեղեցիները կողոպտում, ժողովրդին անդոթուն կոտորում և մեծ մասը գերի տանում: Այդ ժամանակ էլ կործանվում են և բանդվում Անիի գեղարվեստական կոռողները:

Իդնատիոսի ձեռադիր Ավետարանի վկայությամբ Զարմաղանի հալածանքներց զերծ չեն մնում նաև վրացիներն ու տաճելիները: Անա թե ինչու զրշագրի էլ 404-ի հիշատակության պատմական արժեքը կրկնակի տեսակներից ուշագրավ է:

Իդնատիոսի ձեռագրից պարզում է նաև մի այլ կարելոր հանդամանք Մելանուալ իշխում է այն սովորական կարծիքը, թե 13-րդ դարի անիշխանության և ֆեոդալական հարստացարությունների շրջանում հայ ժողովրդի ստեղծագործական կյանքը կանգ է տաել: Սակայն պատմական փաստն այն է, որ հականակ տիրող ծանր կացության, որը բարրարու մոնղոլ-թաթարների հեղեղումով ստեղծված է Հայաստանում, ինչպես և տառաշաբար, հայ ժողովրդի շինարար շարունակությունը և առաջնորդությունը են ձեռագործների էշերը, գովազգույն ներկում, ուկենզօծում: Կանգ չի առնաւմ նաև զրականությունը: 13-րդ դարի զրական հորիզոնի վրա փայլում են երեք նշանավոր գեմքեր՝ Վարդան Այգեկյու, Ֆրիկ և Կոստանդին Երգնելացի: Այգեկյուն իր հորինած առաջներով և նովիչներով, որոնք գեղարվեստական բարձր արժեք ունեն և երեվան են բերում ժողովրդի իմաստությունը, սուր ծաղրի է ենթարկում ժամանակի տգետ հոգևորականներին և աշխարհիկ ֆեոդալներին: Ֆրիկն առաջին բանաստեղծն է, որ մոնղոլական տիրապետության դեմ արտահայտելով ժողովրդի զայրուցին ու ատելությունը, համարձակ բողոքում է ոչ միայն բաղադրական, այլև սոցիալական անհավասարության դեմ: Նա գտնում է, որ մարդկան պետք է ապրեն հավասար կյանքով: Խոկերներին, սիրո ու բնության տաղանդավոր բանաստեղծը, երգում է իր «պայտառ սուրաթ»-ով սիրունան և բնության բարեիները, որոնց կերտել է Աստված:

Հանդես են գալիս նաև մատենագիրներ, որոնք արձանագրում են ժամանակի բաղադրական մուայլ անցքերը և ժողովրդի անլուր տանչանքները: Այդ պատմագիրներից հատուկ ուշագրության արժանի են Վարդան վարդապետը, Կիրակոս Գանձակեցին, Արմբատ պատմիչը (Հեթում Ա թագավորի եղբայրը) և Հերում պատմիչը, որոնց պատմագրության մեջ գտնում ենք կարելոր տեղեկություններ իրենց գերախտ ժամանակշրջանի, մանավանդ թաթարական արշավանքի և Հայաստանում նրանց կատարած անդությունների մասին:

13-րդ դարի մոռալ գեղքերի հարազատ արձանագրության տեսակետից մանավանդ շատ գնահատելի է Իգնատիոսի մագաղաթյա ձեռագիրը, որի երկու հիշատակարաններում, թեև սեղմ, բայց հուզիչ տեղեկություններ կարդում ենք հատկապես Զարմաղան զորակետի բարբարոսության մասին: Այդ աղբյուրներն առանձնապես արժեքավոր են նրանով, որ միանգամայն նոր էջ են պարզում Անիի ժողովրդի անուոր հերոսական տանջանքների պատկերը գծելիս, նշելով, թե «անողորմ» թաթարները ոչ միայն զրավում են մայրաբաղար և անխնա կոտորում, ավերում ու քանդում, այլև բռնակալներին հատուկ անգիտությամբ անբիշ մարդկանց ողջ-ողջ բաղում են գրերի մեջ:



Նկարիչ Իգնատիոսից ավանդ մնացած 1214, 1232 և 1236 թվականների թանկադին ձեռագրերը իրենց նրբարփեստ գրչությամբ, ընտիր գեղագրերով ու գեղեցիկ մանրանըկարներով այսօր պարզ զաղափար են տալիս 13-րդ դարի տաղանդավոր գրչագրի և մանրանկարչի պայծառ դեմքի, նրա ինքնուրուց արվեստի մասին:

Այդ արժեքավոր գրչագրերից 1236 թվականին գրված Տեկորի վանքի ու Խծկոնի ուխտի մագաղաթյա Ավետարանի հատկանշական գծերից մեկն այն է, որ իր երկու հիշատակարաններով մեծ ծառայություն է մատուցում պատմական գիտության, նկա-

րում է 13-րդ դարի հայոց պատմության ամենամռալ մի էջը, զծում է Անիի դրավումը և մայրաբաղարի ժողովրդի անլոր տանջանքների և այն արյունահեղությունների, կոտորածների և շարշարանքների մասին, որ «մարդագեմ զագան թաթարները» պատճառում են նաև վրաց և տաճիկ ժողովրդներին, ավերելով նրանց զավառներն ու քաղաքները:

«...Որ եկն ի վերայ ամենայն աշխարհաց Հայոց և Վրաց և Տամակաց ի մարդադիմ զաղանց՝ զաթարէն պատմեսցուք զգառնութիւն և զշարչարան զժամանակիս... Անթիւ էր աւերումն քաղաքաց և գաւառաց մինչև ի մեր սահմանն որ էր թուականն ՈՉԵ (1236)».

Եթե հայոց պատմությունը 1236 մռալ թիւկանի մասին լունեն մի այլ աղբյուր, միայն այս ձեռագիր փաստաթուղթը բավական է հաստատելու Անիի հայ ժողովրդի ողբերգությունը, որ տեղի է ունեցել թաթար Զարմաղան զորապետի հարվածների ներքո:

Իգնատիոսի ինքնատիպ արվեստը դրսկորում է 13-րդ դարի մանրանկարչական և գրչագրական մշակույթի էական առանձնահատկությունները, միաժամանակ ընդդում իր ստեղծագործական խոշոր ձիրքը: Իրրև ձևակերպված և ինքնատիպ արվեստագետ, նա իր հմուտ վրձինով և վարպետ գրչով զարկ է տվել հայ մանրանկարչության, մանավանդ գրչագրության արվեստին: Ահա թե ինչու հայ գեղարվեստի պատմության մեջ նույնի իր ուրույն և պատվավոր տեղը:

